ԳԻՏԱԿԱՆ ԼՐԱՏՈՒ

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏԱԿԱՆ ԱՄՍԱԳՐԵՐՈՒՄ

Вопросы истории

1966, № 1

Ամսագրի առաջին համարը սկսվում է «Ամսագիրը և պատմական գիտությունը» առաջնորդողով, որը նվիրված է ամսագրի 40-ամյակին։

Պ. Մ. Ռոգաչևի, Մ. Ա. Սվերգլինի «Ազգերի» հասկացության մասին» հոդվածը նվիրված է ազգերի և ազգային հարաբերությունների տեսության պրոբլեմի քննարկմանը։ Հոդվածագիրները նշում են, որ ներկա ժամանակաշրջանը շատ նորություններ է մտցնում ազգային հարաբերությունների տեսության և պրակտիկայի մեջ։ Ազգերի և ազգային հարաբերությունների մասին տեսությունից դուրս են մղվում հին, իրենց դարն ապրած որոշ հասկացություններ, մյուսները զարգանում, ճշգրտվում են կյանքի պահանջներին համապատասխան։ Այս տեսակետից կարևոր նշանակություն է ստանում ազգի հասկացության ճիշտ բնորոշումը։ Այս հարցի կարևորությունը բացատրվում է նաև նրանով, որ բուրժուական ռեակցիոն տեսաբանները խեղաթյուրում են ազգային հարաբերությունների հարցը։

Հոդվածում համառոտ քննության է առնված ազգը բնորոշող հատկանիշները։

Միջազգային բանվորական շարժմանը, մասնավորապես Մեծ Բրիտանիայի արհմիութենական շարժմանն է նվիրված Ի. Ի. Ժիգալովի «Պայքարը Մեծ Բրիտանիայի տրեդ-յունիոններում պատերազմի և խաղաղության հարցում (1955—1964 թթ.)» հոդվածը։ Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո անգլիական բանվոր դասակարգի շրջանում ղգալի էվոլյուցիա է առաջացել պատերազմի և խաղաղության հարցի նկատմամբ ունեցած վերաբերմունքում։ Տվյալ հոդվածում քննության է առնվում բրիտանական տրեդ-յունիոնների կոնգրեսի մեջ մտնող անգլիական տրեդ-յունիոնների տեսակետները և ներքին գաղափարական-քաղաքական պայքարը պատերազմի և խաղաղության հարցում, 1955—1964 թթ.՝ կոնսերվատորների կառավարության ժամանակաշրջանում Իդենի, Մակմիլանի և Դուգլաս-Հյումի գլխավորությամբ։

Պ. Պ. Գայդենկոյի «Բուրժուական փիլիսոփայությունը պատմական պրոցեսի ռեալ բովանդակության որոնումների մեջ» հոդվածում խնդիր է դրվում ցույց տալու, թե ինչպես և ինչու փոխվեց բուրժուական փիլիսոփայական պատմական մտքի ընդհանուր պատկերը 19-րդ դարի վերջերին։ Հոդվածագրի ուշադրության կենտրոնում է գտնվում բուրժուական փիլիսոփայության պատմության զարգացման երկրորդ էտապը, որը սկիզբ է առնում առաջին համաշխարհային պատերազմի և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության ժամանակաշրջանից, հասնում է մինչև մեր օրերը։ Տվյալ թեմայի ուսումնասիրության հիմքում դրված է իսպանական փիլիսոփա Օրտեգա ի Գասետը։

Ամսագրում հետաքրքրության արժանի նյութերից են նաև Բ. Մ. Վոլկովի «Կոլտնտեսային դյուղը հետպատերազմյան առաջին տարում», Ա. Մ. Սախարովի «Եկեղեցին և ռուսական կենտրոնացված պետության առաջացումը», Յա. Դավրանիկի, Ի. Կորժալկոյի, Յու. Մեսարոշի, Զ. Շոլնի «Ժողովրդական մասսաները 19-րդ դարի չեխական և սլովակյան ազգային շարժումներում» հոդվածները, «Ջ. Բարիբալդին և նրա «մեմուարները» հուշագրությունը, Բ. Յու. Մայսկու «Ստոլիպինականությունը և Ստոլիպինի վախճանը», Ն. Ն. Յակովլևի «Ֆրանկլին Ռուզվելտի կյանքի էջերը պատերազմի տարիներին» դոկումենտալ ակնարկները և այլ նյութեր։

ВОПРОСЫ ИСТОРИИ КПСС

1966, № 1

Ամսագիրը սկսվում է Լ. Ի. Կրիլովի «Գյուղում սոցիալիստական շինարարության տեսության ու պրակտիկայի զարգացումը եղբայրական կուսակցությունների կողմից» հոդվածով։ Սովետական Միության փորձի հիման վրա Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական երկրների կոմունիստական և բանվորական կուսակցությունները, չնայած եղած դժվարություններին և առանձին սխալներին, հաջողությամբ են իրականացնում գյուղացիությանը կոոպերատիվների միջոցով սոցիալիզմին անցնելու լենինյան ուսմունքը։ Գյուղացիության կոոպերացումը հիմնականում ավարտված է Բուլղարիայում՝ 1957 թ. վերջերին, Ալբանիայում, Հունգարիայում, ԳԴՌ-ում, Ռումինիայում, Չեխոսլովակիայում՝ 1961 թ., Չինական Ժողովրդական Ռեսպուբլիկայում 1959 թ. սեպտեմբերին կոոպերացված էր գյուղացիական տնտեսությունների 99,1%-ը։

Հոդվածում մանրամասն տրված է գյուղացիության կոոպերացման առանձնահատկությունները սոցիալիստական տարբեր երկրներում։

Վ. Գ. Սմոլենսկու «ՍՄԿՊ տնտեսական քաղաքականությունը և հակակոմունիզմի գաղափարախոսները» հոդվածում քննության է առնված հակակոմունիզմի գաղափարախոսների հակագիտական տեսակետները Սովետական Միության կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականության վերաբերյալ։ Հոդվածագիրը բազմաթիվ փաստերով ցույց է տալիս, որ իմպերիալիզմի գաղափարախոսները ձգտում են խեղաթյուրել արտադրահարաբերությունների բնույթը ՍՍՌՄ-ում, կոմունիստական կուսակցության և սովետական պետության տնտեսական քաղաքականությունը։ Նրանց պրոպագանդայի գլխավոր նպատակն է՝ կապիտալիստական երկրների աշխատավոր մասսաների առաջ վարկաբեկել սոցիալիզմը որպես հասարակական կարգ։ Հակակոմունիզմի այդ կարգի գաղափարախոսների թվում են Համբուրգի տնտեսական ընդհանուր պրոբլեմների ինստիտուտի պրոֆեսոր Էրիկա Բետխերը, պրոֆեսոր Կարլ Տելհեյմը և այսպես կոչված սովետների հարցի գծով արևմտա-գերմանական էքսպերտներ, Հարվարդի համալսարանի պրոֆեսոր, ռուսական հետազոտության ինստիտուտի դիրեկտոր Աբրամ Բերգսոնը, ֆրանսիական սոցիոլոգ Ռայմոն Արոնը և այլն։

Ազգային հարցին է նվիրված Մ. Ի. Կուլիշենկոյի «Ազգային հարցի լուծումը ՍՍՌՄ-ում՝ բուրժուական պատմագրության ազոտ լույսի տակ» հոդվածը, որտեղ բազմաթիվ փաստերով ցույց է տրված, որ բուրժուական պատմագրությունը այդ հարցում հետապնդում է մի նպատակ՝ նսեմացնել սովետական փորձի նշանակությունը, թուլացնել նրա ձգողական ուժը, ազատագրվող երկրների ժողովուրդներին արգելակել ճիշտ պատկերացում ունենալու Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխությունից հետո ՍՍՌՄ-ում ազգերի իսկական վերածննդի և զարգացման մասին։ Հոդվածում խնդիր է դրվում Ուկրաինայի, Բելոռուսիայի, Լիտվայի և Էստոնիայի հանրապետությունների ՍՍՌՄ-ի հետ փոխհարաբերությունների օրինակով բացահայտել սովետական իշխանության առաջին տարիներին մեր երկրում ազգային հարցի լուծման գործում կոմունիստական կուսակցության պայքարի պատմության բուրժուական գրականության հակագիտական բնույթը։

Ամսագրի «Հաղորդումներ» բաժնում տպագրված է Վ. Ռ. Գերասիմյուկի «Վ. Ի. Լենինը և պայքարը հացի համար սովետական իշխանության առաջին ամիսներին» և Մ. Ի. Դորոգովայի «Մասսայական աշխատանքը ԿՎՀ-ԲԳՏ օրգաններում արդյունաբերության մեջ (1929—1932 թթ.)» հոդվածները։

Հետաքրքիր նյութեր են տպագրված նաև ամսագրի «Կոնսուլտացիա», «Մարդիկ, իրադարձություններ, փաստեր», «Գրախոսություն և քննադատություն» բաժիններում և այլն։

ВОПРОСЫ ФИЛОСОФИИ

1966, № 1

Ամսագրում տպագրված «Տիեզերք թափանցելը և արտաերկրային տարածության անդրադարձումը մարդու կողմից» առաջին հոդվածում, որի հեղինակներն են ՍՍՌՄ տիեզերագնաց-օդաչու Ա. Ա. Լեոնովը և բժշկական գիտությունների թեկնածու Վ. Ի. Լերեդևը, արծարծված են տիեզերական թռիչքի ժամանակ տարածական հա-

բարերություններում մարդու արտացոլման մի քանի պրոբլեմներ, նպատակ ունենալով դրանց վրա հրավիրել փիլիսոփաների և հոգեբանների ուշադրությունը։

Ն. Կ. Դրուժինինի «Վիճակագրության մի քանի փիլիսոփայական հարցեր» հոդվածը նվիրված է վիճակագրական գիտության տեսությանը։ Հեղինակը ելնելով այն ճշմարտությունից, որ վիճակագրությունը սոսկ նկարագրական-համեմատական նշանակություն չունի, որը, անշուշտ կարևոր է, նշում է, որ այն շոշափում է նաև իմացաբանական խնդիրներ, որոնք ստանում են գիտական նշանակություն։ Վիճակագրական դիտումները, որպես կանոն, հանդիսանում են մասսայական երևույթների իմացության ամբողջ պրոցեսի սկիզբը։

Ամսագրում տպագրված է Է. Վ. Իլենկովի «Տրամաբանության առարկայի, որպես գիտության՝ հարցի պատմության շուրջ» երկրորդ հոդվածը, որտեղ քննարկվում է տրամաբանությունը որպես գիտության պրոբլեմ։ Հետաքրքրություն են ներկայացնում ամսագրում տպագրված Ա. Ի. Ռակիտովի «Գիտական տեսության տրամաբանական կառուցվածքը», Ր. Ի. Մոչալովի «Գիտության երևակայական պրոբլեմը», Ռ. Ս. Կարպինսկայայի «Մոլեկուլյար կենսաբանության փիլիսոփայական պրոբլեմների մասին», Ա. Ի. Կիտայգորոդսկու «Տեսության պրոբլեմը քիմիայի մեջ» և այլ հոդվածներ։

Լ. Ֆ. Վոլֆսոնի «Ռոյակ հեղափոխության մանիֆեստը և նրա քննադատությունը» հոդվածում քննության է առնված Ամերիկայի Միացյալ Նահանգների հիմնական հակասությունները կապված երեք հեղափոխությունների հետ (կիբերնետիկա, ռազմական տեխնիկա և մարդու իրավունքներ)։ 1964 թ. մարտին ԱՄՆ-ում հրապարակվում է «Ռոյակ հեղափոխության հատուկ կոմիտեի մանիֆեստը. ԱՄՆ-ի ճգնաժամի հիմնական մոմենտի գնահատումը և գործողության ծրագիրը», որը հասցեագրված է պրեզիդենտ Ջոնսոնին։ Այդ փաստաթղթի տակ իրենց ստորագրություններն են դրել 32 մարդ գիտնականներ, հրապարակախոսներ, արհմիութենական և հասարակական գործիչներ և այլն։

«Բանավեճ և քննարկում» բաժնում տպագրված են Պ. Մ. Նգիդնսի «Պատմական մատերիալիզմի կառուցվածքի սկզբունքների մասին», Լադիսլավ Տոմաշեկի, Իրժի Լիսի (Չեխոսլովակիա) «Դիտողություններ բանավեճի ընթացքում» հաղորդումները։

«Կոնսուլտացիա» բաժնում հրապարակված է Վ. Դ. Ջոտովի «Զարգացող երկրների սոցիալիստական կոնցեպցիաները և գիտական սոցիալիզմը», որտեղ պարզաբանված են այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ ինչպես գնահատել սոցիալիստական դոկտրինան, հեղափոխական դեմոկրատների սոցիալիստական, «Ազգայնական տիպի սոցիալիզմի», ռեակցիոն ուժերի «սոցիալիստական» կոնցեպցիաները։

Հետաքրքիր նյութեր են հրապարակված ամսագրի «Գիտական կյանք», «Գրախոսություն և քննադատություն» բաժիններում։

КОММУНИСТ

1966, № 1

Կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանում կարևոր նշանակություն է ստանում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության կուռ միասնության հետագա ամրապնդումը։ Այդ հարցին է նվիրված Ի. Գլոտովի «Բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքի տնտեսական հիմունքների մասին» հոդվածը։ Հեղինակը նշում է, որ ներկա էտապում բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության արմատական շահերի միասնությունը իր քաղաքական արտահայտությունն է գտնում համաժողովրդական սոցիալիստական պետությունում, որը հանդիսանում է սովետական հասարակության զարգացման օրինաչափ էտապը։ Համաժողովրդական պետությունը իր տոչն խնդիր է դրել մինչև վերջ հասցնել հասարակության վերափոխումը, որը սկսել էր պրոլետարիատի դիկտատուրայի պետությունը։ Համաժողովրդական պետությունը հանդիսանում է բանվորների և կոլտնտեսային գյուղացիության դասակարգային դաշինքի բարձրագույն ձևը, քաղաքական օրգանը։

Ա. Ռումյանցևի «Տնտեսական գիտությունը և ժողովրդական տնտեսության կառավարումը» հոդվածը նվիրված է ժողովրդական տնտեսության կառավարման կատարելագործման պրոբլեմին։ Հոդվածում քննության են առնված այն ուղիներն ու ձևերը, որոնք մշակել են ՍՄԿՊ Կենտկոմի մարտյան և սեպտեմբերյան (1965) պլենումները ժողովրդական տնտեսության կառավարման կատարելագործման ուղղությամբ։

Ամսագրի «Գաղափարախոսություն և կուլտուրա» բաժնում զետեղված է Ֆ. Կոնստանտինովի «Լենինյան պարտիականությունը փիլիսոփայության մեջ և արդիականությունը» հոդվածը, որտեղ քննության է առնված մարքս-լենինյան բուրժուական երկու հակադիր աշխարհայացքների գաղափարական պայքարի ձևերը, ցույց է տրված լենինյան պարտիականության դերը մարքս-լենինյան փիլիսոփայության զարգացման գործում։

Ա. Ս.